երկրորդ օրը մանկունքն սկսան զուարթութեամբ իրենց ուսմանց ընթացքը։ Այս հանդիսէն շաբաթ մը վերջը՝ վարժարանը կրկին պատիւ մ՚ալ ունեցաւ, և կրկին քաջալերութիւն մը՝ վարժապետքն։ Աւայրմէն Անգղիացի բազմագէտ արքեպիսկոպոսն՝ ամիս մը առաջ կարդինալութեան բարձր աստիճանն ալ առնելով՝ Հռովմէն եկեր Լոնտրա կ՚երթար ուղղափառ եպիսկոպոսաց գահը նորէն կանգնելու Անգղիոյ մայրաքաղաքին մէջ. մասնաւոր դիտմամբ՝ Վենետիկէն ուղեց անցնիլ. և քաղքիս պատրիարքին հետ տեսութենէն վերջը՝ միտքը դրած ըլլալով երթալ մեր վանքն ալ, և օդուն ու ծովուն խառնակութենէն արգիլուելով, որովհետև չէր ալ կրնար ուշանալ և ճամբէն ետ մնալ, վանքին տեղ եկաւ Ռափայէլեան վարժարանը, և հաճութեամբ տեղն ալ տղայքն ալ տեսնելէն ետև, հոս յայտնեց՝ որ Հռովմէն եկած ատենը Որբազան քահանայապետն մասնաւոր յանձնարարութիւն ըրեր է իրեն երթալ մեր Մխիթարեան սրբոյն Ղազարու վանքը, և իր սուրբ ողջոյնը տալով քաջալերել զՄխաբանքը որ միամտութեամբ առաջ տանին իրենց բարեսէր ջանքն՝ զոր ինքն ալ իր աստուածային և առաքելական օրհնութեամբն կը հաստատէ։

Երեքրդ էր Թերևս հոս այս միխթարութիւնս և քաջալերքս ալ հրատարակել, թէ որ միայն մեզի առանձնական շնորհք մը սեպէինք. բայց երբոր մեր վարժարանաց և ազգերնուս ալ վերաբերեալ կը տեսնեմք, չենք կրնար լռել. մանաւանդ այս ժամանակիս, որ դժբաղդութեամբ երբեմն խառնակ ձայներ կը լսեմք ազգերնուս միջէն, որ հակառակ կ՚ելլան մեր ջանիցն և դիտմանն զոր երկինք ալ կ՚օրհնէ, երկնից երեսփոխանն ալ, և այսպիսի աստուածարեալ և իմաստուն հայրապետը ալ։

Անգլիսեայ կարծիքը ինչ սկզբամբ ալ ըլլայ՝ մենք միշտ խաբուած սեպելով և մեր կողմէն ներելով ճանչցած կամ չճանչցած փնտռներնուն, կը թողումք ժամանակին անաչառ ատեանին քննութեանը. յորդորելով մենք զմեզ՝ որ դժարութեանց մէջ ալ ետ չկենամք՝ Աստուծոյ և ազգին նուիրած ջանքերնէս. զազգը՝ որ հակառակ կարծեաց մէջ ալ ընտրէ զուղիղն. և մեր աշակերտքն ալ որ առաքինաբար հաւատարիմ ըլլան իրենց առած բարի կրթութեանը և քրիստոնէական, մարդկային և ազգային պարտքերնուն. որով գայթակղութիւնքն ալ երթալով պակսին, և ազգերնուս օրերը հետզհետէ առջինները աւելի պայծառ և երջանիկ ըլլան։

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅԵՏԻՆ ԲԱՆՔ

Աստուածապատիւ Ռափայէլեան վարժարանին, 'ի յորդորէ դասուն Ռափայէլեան վարժարանին, 'ի յողջոյնս 'ի հայրենիս։

Աթէ իսկ երբեք եղեալ յամենայն 'ի կեանս իմ օր խրախաւէտ և բարեգուշակ, և դարձեալ օր աղեխորով և սրտաձմլիկ, անշուշտ սերկեւանս օր է, ո՜ Աստուածապատիւ Ռափայէլ և արդոյ կաճառ Հայոց իմ և Աղբարոց պատուականաց. անշուշտ այս օր է, յորում ցնծալոյ աչօք տեսանեմ զի դասմի ողջոյն երեքտասան քաջուշիմ և ընտիր պարմանեաց ընծայի 'ի Թատր աշխարհիս իբրև ըմբիշք արութեան, զերկսայրին զէն՝ զառաքինութեան և զգիտութեան առեալ զանձամբ. առաջնոյն կոխել ըզգլուխ բարիատեաց բանսարկուին, երկրորդաւն 'ի բաց հալածել զտգիտութեան թանձրամած խաւար և լմնել օձանք զարգացման ազգին։ Ցխրութեան և տրտմութեան կոչեցի դարձեալ զօրս, զի ստիպիմ յակամայս բաժանել յետ սակաւուց 'ի սիրելեաց

1 Ռափայէլեան վարժարանին Երրորդ դասուն վերջին հարցաքննութեան հանդէսը տես եր. 273։

իմոյ, զորս սիրեցի և ոչ ևս դադարեցայց 'ի սիրելոյ։ Վասկայն խրախոյս մեծ է ինձ 'ի պնդութիւն յուզելոցս կրից՝ տեսանել զձեզ համախմբեալս աստէն 'ի լսել զյետին բան ապիկար ատենախօսիս, և 'ի տալ զվերջին հրաժեշտ հանդիսական՝ իմ և ձեր բարեմոյն որդեկաց, որ յաւարտ ժամանեալ ասպարիզին իւրեանց պատրաստին դառնալ 'ի հայրենիս։ . . . Ի լուր հայրենեաց անշուշտ թնդացին սիրտք ձեր ո՛ առաքինազարդ մանկունք, և ետուն հառաչաձայն հեկեկանօք և խնդամտութեամբ զարձագանգս բանիս։ Այլ թոյլ տուք ինձ հարցանել, զի՞նչ է որ զձեզ 'ի ծնեալսէր զրկաց քեցեալ, և 'ի մայրենական խանդաղատանաց և գգուանաց օտարացուցեալ՝ նժդեհաբար պանդրիտեցոյց ցայսօր ընդ օտար աստեղեաք և յօտարալուր ժողովուրդս, եթէ ոչ փոյթ և սէր, նորոգ վարուց և նորոգ քաղաքավարութեան։ Այն են որք ընդ ծով ճանապարհ արարեալ դիմագրաւ ամեհի ալեաց, և կէսք ընդ ձիւնախաղաղ կամ ընդ հրատոչոր գաւառս անցեալ, պանդրխտին ընդ երկար հեռի 'ի հայրենեաց, այլ սէր վաճառաշահութեան և ընչաքաղցութեան ձգեն զնոսա։ Այց դուք ոչ այդպէս, քանզի զնոսա 'ի տարաշխարհական պանդխտութի՞ ձգէ արծաթն կորստական, իսկ զձեզ զիտութիւնքն անկորուստք և յաւէտ գովելիք. նոքա անձանց միայն ծառայեն, դուք անձանց և հայրենեաց միանգամայն լինիք օգտամատոյց, զմիտս պէսպէս գիտութեամբք և զհոգիս ազգի ազգի ծաղկազարդ և անուշահոտ առաքինութեամբք զարդարեալ։ Այլ թէ ո՛րպէս պարտ և արժան իցէ զերկոսին զայսոսիկ 'ի մի զոգել անանջատելի հանգուցիւք, այս է զբարեաց թողուլ յիշատակ յաստիս և 'ի հանդերձելումն երանական կենաց լինել ժառանգորդ, մնայ ինձ, եթէ ներեսցէ պատկառելի ակումբս, փոքր 'ի շատէ համառօտել յունկն սիրելեացդ իմոց, իբրև յետին բան և կտակ անաղարտելի։

Ա.

Ինչ ցիս գնացին ահա, սիրելիք իմ, վեցեքին ամք որ անանցանելիք 'ի սկզբան թուէին, և արդ յաւարտն ժամանեալ թուին երագունք իբրև զդիւրաշրջիկ անիւս կառաց, կամ իբրև նետ ձգեալ 'ի լայնալիճ աղեղանէ։ Որանզի չիք ինչ 'ի կենցաղումս անանցանելի, եթէ ուրախութիւնք իցեն և եթէ նեղութիւնք, անցանեն միօրինակ։ Չիք ինչ 'ի նիւթականացս որ անանց իցէ. ամենեցուն այս են բաշխք, լինել և կորնչել. միայն հոգին է որ ընդ այս սահման արտաքս վազէ, զի նա միայն յԱրարչէն իւրմէ յիւր տպաւորեալ պատկեր՝ արտաքոյ է ճակատագրի նիւթականաց։ Եթէ այդպէս իցէ, յիմարութիւն մեծ է զակատել զհետ անցանելի իրաց, և ունկն կարկառել չարաչար բերմանց մարմնոյ։

Ահա դուք յայս միջոց վեցից ամաց, հանապազօր ընդ մարմնամնոյց կերակուրս առիք և զհոգևորս զայս կերակուր, այս է ճանաչել զոգի և զվախճան նորա, և խոտորել յամենայն չար յօժարութեանց ապականեալ բնութեանս։ Ով իցէ երբէք գիտութիւն դժուարին և անըմբռնելի մտաց կորովագունից անգամ՝ 'ի մարդկանէ, սա այն է, զոր բազումք գիտել դաւանին, այլ գործով զանգիտութիւն իւրեանց նշաւակեն։ Ով ելցուք 'ի հին ժամանակս յորս աստուածանգիտութեան խաւար կալեալ էր զմիտս ամենայն հողածնաց, յորս ամենայն ինչ Աստուած էր բաց 'ի ճշմարիտն Աստուծոյ, տեսանեմք այլ յայլ մէջ շրջեալ զբնութեանն կարգ, զհոգի նմանակից Աստուծոյ՝ սպասահարկու և արբանեակ մարմնոյ։ Ցեղև շատ արարչին բնութեանս առ ուսուցանելոյ զմարդիկ միանգամ համայնաջինջ ջրհեղեղաւ խրատել, երկրորդ անգամ հրաձորան երկնատեղաց պատուհասիւք սրբել և զտել զբնութիւնն։ Որանզի տեսանեմք յետ այսոցիկ ահաւոր և աստուածառաք պատուհասից զի տակա-

ւին ջերանին մարդիկ յախտս դժնդակս։ Իմաստունքն անուանեալք առ Հելլենացիս՝ քարոզէին զպղծութիւնս գործով և բանիւ, զինչ ասա ոչ թերի-ցեմք կարծիս զանիմաստիցն։ Այս պարտիմք ասել եթէ յանաստուածութեան ժամանակս գիտութիւնն Ճանաչելոյ զՀոգի և զվախճան նորա, և խոտորեալն 'ի չար ցանկութեանց մարմնոյ, զանխուլ եկաց ամենևին։ Բայց զինչ յետ ծագելոյ աւետարանական միտապայծառ լուսոյն, որ քարոզէ զսրբութիւն և զանստերիւր վարս։ Այլ, տեսանեմք դարձեալ զբազումս բազում անգամ զանխլացեալ կամակար 'ի գիտութիւնս յայս։ Այնպէս զի, ներբեցէք յանդգնութեան բանիս, փոքր միւս ևս և 'ի զուր երևել Փրկչին իմոյ մարմնաւորութեան, չարչարանաց և խաչին, 'ի զուր և այնչափ նահատակաց արիւն յորդաբուխ որ զկեանս ընդ մահու փոխանակեցին նմա նողլինելով Փրկչին իւրեանց և քարոզ նորին վարդապետութեան. 'ի զուր այնչափ Ճգնաւորաց, կուսանաց և երանեալ արանց շահատակութիւն յօրինակ մեզ։ Այլ ձեզ պարմանիք քաջուշիմք, ահա համառօտ ուրուագիծ պատկեր յեղյեղուկ և զաղփաղփուն բնութեան մարդոյ որ 'ի խնամս չարին հաստատեալ կայ 'ի մանկութենէ իւրմէ։ Բայց են աչք մտաց մերոց առ 'ի Ճանաչել զՃշմարտութիւն, այլ 'ի գործեն երկուանամք ինն. կիրք ներհականք զցայգ և զցերեկ մարտ եղեալ կռուին 'ի մեզ. և որ յաղթող հանդիսանայ յահաւոր Ճակատամարտի աստ, զնա երանեսցեն ամենայն դարք, և առ նովաւ յոչինչ համարեսցին ամենայն աշխարհակալք աշխարհիս այսորիկ։

Փոքր 'ի շատէ խելամուտ եղէք ցայսօր ամենայն ախտից բնութեանս մերոյ և դարմանոց նոցին և ուսայք զբարին 'ի չարէն որոշել։ Պտկեցան և ծլեցան 'ի ձեզ ամենայն ազգի ազգի առաքինութիւնք, չասեմ ծառացան և արմատացան, քանզի այն երկարագոյն ժամանակաց վաստակ է. հապա պտղաբերս արարէք զնոսին այսուհետև և արդասաւորս, անխոնջելի վաստակօքդ։ Զեն ինձ մուսացնք եթէ որչափ մէն մի 'ի ձէնջ ընդ անձին ոգորելով, օր ըստ օրէ ջան 'ի գործ եղեալ նկրտէր զայս կամ զայն ախտ արմատաքի խլել յինքենէ. որոյ վասն եթէ երբէք վարեցան 'ի դաստիարակաց ձերոյ դեղք դառինք, սակայն դուք ինքնին վկայէք զի միայն յօգուտ ձեր էին։ Բանզի և բժիշկ Ճարտար առ 'ի բուժել զախտս մարմնոյ և զվերս խղխայթեալս, երբէք դառինս 'ի գործ ածէ դեղորայս և դարմանս դժոխրմբերս. ոչ առ չարիս ինչ գործել, այլ առ բարերարել վշտագնեալ մարդկութեան։

Այն են ապաքէն ոչ սակաւք որ առանց մարդկային գիտութեանց վարեն կեանս աստուածահաճոյս, զայս ոչ ոք ուրանայ. բայց դուք ընդ առաքինութեան և զգիտութիւնս կամեցայք լծորդել զի մի գիտութիւն մարդկային սոսկ յաստուածազարդ առաքինութեանց սոնքացեալ հպարտանայցէ 'ի միտս անձին և նմանեաց։ Ի ձեր վառեալ 'ի միտս ջահ գիտութեանց՝ ընդ իմումս աստուածայնոյն Այրիշայի զկրկնակի տգիտութիւնն նկատեցէք մայր ամենայն չարեաց։ Այս դուք զգօնութեամբ ձերով և մատենայած հմտութեամբք պարտիք յամօթ առնել զթերատես զայն դատակնիք, որով անխոհուն միտք դատապարտ առնեն զգիտութիւնս, իբրու միտաբերս անձին և ընկերութեան մարդկայնոյ 'ի գրեալ խովին։ Զի իմաստութիւն աթոռակից է Աստուծոյ, և ինքն տնօրէն ամենայն եղելոցս չափով և կշռով։

Այլ զի է զի 'ի բաղումս ազգաց Այրոպայ ջահավառեալ լուսոյ գիտութիւն, և տակաւին բարբանջեն ընդ խաւարաշաւիղ հետս մոլորութեանց։ Զի պարտ զարմանալ ընդ այդ, քանզի ո-րոշեցին զաստուածայինն 'ի մարդկային գիտութեանց, նորին աղագաւ յամօթ արար զնոսա Տէր դանդաչել 'ի լուսապայծառ տուընջեան իբրու 'ի խաւարամած գիշերի։ Բանզի գիտութիւնք բարւոյ են պատճառք, որոյ գիտենն

վնասին 'ի բարւոքն 'ի կիր արկանել։

Այս գիտելով և մեր նախապատիւ դասեցեալք և դասեմք միշտ 'ի վարժարանիս զաստուածայինն գիտութիւն, առանց որոյ առ ոչ ինչ կամ սակաւ սիտանացու է մարդկայինն, և 'ի սոյն միշտ ջանացեալք համոզկեր լինել ձեզ զցայգ և զցերեկ։

Յեռ արշաւակի սրանալոյ 'ի կրթութեան ձեր ասպարէզ, դարձուցից միանգամ զաչս իմ և 'ի լայնարձակ ասպարէզն գիտութեանց ընդ որ ընթացայք։ Այց զինչ. շլանան աչք իմ 'ի մեծաբորբոք լուսոյն. հիանան և ընդարմանան միտք իմ 'ի խոկալն՝ եթէ որպէս գեղանւոյն առեգական վեցիցս թաւալ ընդ կենդանակամարն երկնից արարեալ, բերել այնչափ զարմանահրաշ արդիւնս, որ երկոտասան կամ աւելի ամաց կարօտեին արդեօք։ Օ՛ի եթէ ելանեմ յԱղիմպոս անդ 'ի մէջ մուսայից տեսանեմ զոմն 'ի ձէնջ որ քաղցրահնչիւն քնարաւն ընդ աթենայի վսեամ քերդողաց բերի 'ի պայքար. թէ իջանեմ 'ի խինձս երկրի, անդ նկատեմ զայլ ոմն որ մանրակտիտ և սուր աչօք ցանկայ խելամուտ լինել յեղափոխութեանցն եղելոց յերեսս երկրի, և թափանցանել զառ 'ի ներքոյս հողագնտոյս, ուրանօր ոչ ծագէն ամենևին աչք ծիծաղաւէտ արփենւոյն։ Օ՛ոմն տեսանեմ ճանապարհ ընդ օդս առնել արագաթև սլացմամբ, և 'ի սահմանաւոր միտս իւր ջանալ պարփակել զանսահման երկինս։ Օ՛այլ ոմն զօրինաց էլեկտրիոնական ամպախաղաց հրձգութեանց, զցօղոյ և միգի, զանձրևոյ և ըգձեանտալ զպարտուպատշաճ պատճառս, թափանցել 'ի խորս էութեան մարմնոյ, խելամուտ լինել ամենայն երևութից բնութեան և օրինաց նորա, դնել սանձս սրընթաց գետոց, զՋուր 'ի խորոց 'ի վեր պուղեցուցանել, տալ երկաթազէն կառաց շունչ իմն նորազգեցիկ, և ընթացուցանել զնոսին երագագոյն քան զարծուիս թռուցեալս յօդս, ընդ անսահման տարածութիւն, 'ի մի վայրկեան ժամանակի հաղորդել զքաղաքանին ընդ իրեարս. զայս ամենայն և զայլ սոցին նման բազում երևոյթս 'ի կարճոյ ըստ ներել ժամանակին ամփոփեցիք 'ի միտս ձեր, և իւիք իրօք զընութիւն ձեզ ծառայեցուցիք։ Օ՛այլ ոմն անդուստ նկատեմ որ բնալուծականին շահաւէտ գիտութեանցն եղեալ 'ի խնդիր, անդաձեն զօրէնս առ միմեանս բերման մանրկանց մարմնոց, քննել թէ զինչ զօրութիւնք են որ զմասունս միոյ մարմնոյ սերտ առ միմեանս կռուեալ ունին, և զինչ հակառակ զօրութիւն որ ստիպէ զնոսին բաժանել 'ի միմեանց. զինչ ազդեցութիւն թթուուտից 'ի վերայ մետաղաց, և զինչ 'ի բնալուծութենէ արուեստից օգտակար գիւտք։ Այստ և զայլ ոմն նշմարեմ որ փոքու անձամբ զուս իւր տուեալ երկրագործական աշխատութեանց ցանկայ նուվիմբ զարդիւնս երկրի 'ի ծոց իւր ամբարել, և զանարգասաբեր և զապալեր երկիր հայրենեաց իւրոց, կացուցանել ժամանակաւ արգաւանդ և պտղաբեր։ Ընդ 'ի հեռաստանէ նկատեմ և զայլս որ ազգի ազգի լեզուաց լեալ խելամուտ, այս է, աշխարհաբրոզ գաղղիական բարբառոյն, վաճառասոս անգղիացւոյն, քաղցրահնչիւն իտալացւոյն, ջանան զերեցունց գլխաւոր ազգայս այսոցիկ զընտիր ընտիր հանգամանս յանձինս բերել, դեղերելով 'ի նոցուն օգտաւէտ մատեանս և լեզուացն հրահանգօք մուտ գտանել յարուեստ վաճառաշահութեան։ Այլ զինչ և ասացից վասն այնոցիկ որ զդէմս և զդրուագս 'ի քարտենի ուսան դրոշմել, զգեղեցիկ տեսարանս բնութեան ծրարել 'ի դաշտ սպիտակ. խելամտել ճարտարապետական և ընդօրինական սկզբանց։ Թող ընդ իմ խօսեսցին արարուածք ձեռաց նոցա, որ զարդարեն զդահլիճս վարժարանիս։ Օ՛ինչ և ես ինձ յօդել բարբառ և վասն այնոցիկ որ զմատունս շարժեն 'ի քնար, 'ի ջութակ, և յայլ երաժշտական գործիս քաղցրալուրս ականջաց։ Այլ է ինձ մոռանալ աստէն և զերկու համասուն և քաջուշիմ ընկերս ձեր, որոց բարձրագոյն և քրոմբէատիպ կենաց լեալ փափագող, ինքնանուէր ընծայեցան 'ի սպասաւո-

և զայլ սոցին նման բազում երևոյթս 'ի կարճոյ ըստ ներել ժամանակին ամփոփեցիք 'ի միտս ձեր, և իւիք իրօք զընութիւն ձեզ ծառայեցուցիք։ Օ՛այլ ոմն անդուստ նկատեմ որ բնալուծականին շահաւէտ գիտութեանցն եղեալ 'ի խնդիր, անդաձեն զօրէնս առ միմեանս բերման մանրկանց մարմնոց, քննել թէ զինչ զօրութիւնք են որ զմասունս միոյ մարմնոյ սերտ առ միմեանս կռուեալ ունին, և զինչ հակառակ զօրութիւն որ ստիպէ զնոսին բաժանել 'ի միմեանց. զինչ ազդեցութիւն թթուուտից 'ի վերայ մետաղաց, և զինչ 'ի բնալուծութենէ արուեստից օգտակար գիւտք։ Այստ և զայլ ոմն նշմարեմ որ փոքու անձամբ զուս իւր տուեալ երկրագործական աշխատութեանց ցանկայ նուվիմբ զարդիւնս երկրի 'ի ծոց իւր ամբարել, և զանարգասաբեր և զապալեր երկիր հայրենեաց իւրոց, կացուցանել ժամանակաւ արգաւանդ և պտղաբեր։ Ընդ 'ի հեռաստանէ նկատեմ և զայլս որ ազգի ազգի լեզուաց լեալ խելամուտ, այս է, աշխարհաբրոզ գաղղիական բարբառոյն, վաճառասոս անգղիացւոյն, քաղցրահնչիւն իտալացւոյն, ջանան զերեցունց գլխաւոր ազգայս այսոցիկ զընտիր ընտիր հանգամանս յանձինս բերել, դեղերելով 'ի նոցուն օգտաւէտ մատեանս և լեզուացն հրահանգօք մուտ գտանել յարուեստ վաճառաշահութեան։ Այլ զինչ և ասացից վասն այնոցիկ որ զդէմս և զդրուագս 'ի քարտենի ուսան դրոշմել, զգեղեցիկ տեսարանս բնութեան ծրարել 'ի դաշտ սպիտակ. խելամտել ճարտարապետական և ընդօրինական սկզբանց։ Թող ընդ իմ խօսեսցին արարուածք ձեռաց նոցա, որ զարդարեն զդահլիճս վարժարանիս։ Օ՛ինչ և ես ինձ յօդել բարբառ և վասն այնոցիկ որ զմատունս շարժեն 'ի քնար, 'ի ջութակ, և յայլ երաժշտական գործիս քաղցրալուրս ականջաց։ Այլ է ինձ մոռանալ աստէն և զերկու համասուն և քաջուշիմ ընկերս ձեր, որոց բարձրագոյն և քրոմբէատիպ կենաց լեալ փափագող, ինքնանուէր ընծայեցան 'ի սպասաւո-

րութիւն սեղանոյ տեառն, յաշխարհա-
ծուփ կենցաղոյս յանբոյթ նաւահան-
գիստն ապստարելով զանձինս։

Զոյլ տուք ինձ աղէ, սիրելիք իմ,
հարցանել ձեզ, ոչ դուք արդ այնոքիկ
իցէք, որ վեց ամաւ յառաջ ոչ բանս կա-
րէիք յօդել բերանով, ոչ շարժել զձեռն
'ի գրել, և արդ ուստի՞ այդչափ փոփ-
խութիւնք, և ո՞յք նոցին պատճառք։
Այսպէս ջան ձեր ուսումնասէր, զոր բա-
զում խթանաց պէտք եղեն զառաջինն
առ 'ի զարթուցանել. երկրորդ ան-
գամ՝ ձեր դաստիարակք, որ աննա-
խանձ մտօք բաշխեցին ձեզ զաղբիւրս
իմաստից, զկորդացեալ և զանարօր
երկիր մտաց ձերոց արօրագիր և ակ-
սաբեկ առնելով բազում աշխատութիւ
և տառապանօք, որոց թէ քանի՞ շնո-
հակալիս և երախտիս պարտիցիք, ձեզ
թողում քննել։

Ա՛հա անցին և մոռացօնք եղեն ամե-
նայն նեղութիւնք և վիշտք զորս կրեցիք
'ի տեղւոջ աստ դաստիարակութե ձե-
րոյ 'ի մարզել զանձինս յաստուածահա-
ճոյ և 'ի բարեկրօն վարս, և 'ի զարդա-
րել զմիտս ազգի ազգի գիտութեամբք.
բայց ոչ և այնոքիկ զոր ստացայքն նե-
զութեամբքս այսոքիւք, այս ինքն ըն-
տիր քաղաքավարութիւն և պէսպէս
գիտութիւնք, որ լիցին ձեզ բնակակից
յամենայն 'ի կեանս ձեր։ Ա՛հա եհաս
վայրկեանն փափագելին առ 'ի ձէնջ,
յորում լուծանիցիք 'ի պարապմանց
դաստիարակութեան, և մտանիցէք 'ի
նոր կեանս։ Բայց թէ զինչ առնել իցէ
ձեզ և ո՞րպէս քաղաքավարել անդանօր,
սակաւուք պարզեցից առաջի ձեր, զի
ամենայնի խելամուտ և ներկուռ գտա-
նիցիք, և մի՛ իբրև անգէտս դանդաչի-
ցիք 'ի նոր կեանս ձեր։

Բ.

ՀԻՐԱՒ կատարեցան ամք դաստիա-
րակութեան ձերոյ 'ի վարժարանիս.
այլ միթէ դաստիարակութեանն ժա-
մանակ 'ի վեց ամս պարփակեսցի՞. բա-
վանդակ կեանք մարդոյ կրթութիւն
է ասաց իմաստունն, և զինչ ձեզ որ
հազիւ զառաջին քայլափոխս արարեալ
էք տակաւին 'ի կրթութեանն ասգա-
րէզ։ Որպէս 'ի մանուկ մարմնոյ ոչ է բա-
ւական օր մի կամ եօթնեակ կամ տա-
րի 'ի տածել կերակրովք, և ապա ան-
խնամ թողուլ, այլ հանապազօրեայ հո-
գողութիւն, զնոյն իմա և վասն մտքն-
դեան հոգւոյ, և այն առաւելութեամբ
հանդերձ, որչափ հոգի առաւել է քան
զմարմին. զի մահ մարմնոյ առ ժամա-
նակ մի է, իսկ հոգւոյն անվախճան։

Հապա, դուք սիրելիք իմ, յորժամ
արձակեալք 'ի տեղւոջէ աստի ուրանօր
զամս վեց շնչեցիք զսիւգ անուշարար
կրթութեան, մտանիցէք ընդ հուպ 'ի
թատրն աշխարհիս 'ի լայնն և 'ի բազմ-
որոգայթ, զինչ և որպիսի՞ լինիցին
ձեր գնացք անդանօր, գիտելով զի ա-
մենեցուն աչք 'ի ձեզ են կառուցեալ.
սիրելիք ձեր՝ վայելել 'ի քաղցր արգա-
սիսն, զոր երկայն յոյս տեսութեան
ձերոյ խոստանայր նոցա. գուցէ և այլք,
ըստ պատճառախնդիր բուսոյ բարուց
մարդկութեան խծբիծս գտանել 'ի ձեզ։
Ա՛ժուարին է գիտեմ և ես հաճել զա-
մենեսին, նա և անհնարին իսկ, ուրա-
նօր այնչափ ներհակ կարծիք, կիրք,
զգածմունք տիրապետեն և կբրին ընդ-
դէմ իրերաց, բայց աստ է ձեր քաջու-
թիւն, գիտել թէ ո՞րպէս արժան իցէ
վարել ընդ ամենեսին, ընդ իմաստնոյն
իմաստուն լինել, ընդ անմտին անմտա-
նալ իսկ, թէ երբէք հարկն պահանջես-
ցէ, այս ինքն խնայել 'ի լեզուս ձեր զի-
մաստունս բարբառելոյ, երբ նա արհա-
մարհող նոցին գտանիցի, քանզի ըստ
Իմաստնոյն որպէս ամենայնի դոյ ժա-
մանակ, այսպէս և խօսելոյ և լռելոյ։

Երբու նաժիշտ աստուածայնոյն 'ի
նորոգ կենցաղիդ պէտք են ձեզ դար-
ձեալ ունել սէր ընկերական, սէր ան-
խարդախ և միաբանասէր. քանզի ցոր-
չափ կեամք յաշխարհի, անմարթ է ա-
ռանց այսր սիրոյ կալ զինչ և է ընկե-
րութեան 'ի կայի իւրում և 'ի հաստոջ.
զի յանսիրելութենէ ծնանին թշնամու-
թիւնք, անտի հեռ և նախանձ, սատ-

լութիւն և բամբասանք, և ամենայն չարիք, որք են առհասարակ ցեցք ապա կանիչք ամենայն բարեաց ընկերութեան մարդկան։ Հարցանիցէք զմոս և զորպիսիս սիրել։ Օ ամենայն մարդիկ առհասարակ, քանզի ամենեքին 'ի պատկեր Աստուծոյ արարան իբրև զձեզ, ուստի և վասն ամենեցուն պահանջի 'ի ձէնջ սիրելութիւն, բայց և 'ի սոսա առաւել քան զամենեսին արժան է սիրել զհաւատակիցս ձեր, զազգակիցս, զբարեկամս, զընտանիս և զծնողս ձեր զմարմնաւորս և զհոգևորս, քանզի այս կարգ է սիրոյ։

Ընդ սիրոյ անմեկին զուգակից և խաղաղութիւն պարտ է ձեզ ունել, զոր և ոչ ես այլ ինև Քրիստոս ինքնին պատուիրէ ձեզ, որ զսէր և զխաղաղութիւն եթող յաւանդ իւրոց աշակերտաց 'ի վերջնում աւուր կենաց իւրոց յաշխարհի։ Ընդ խաղաղասէր բարք թէ քանի փնասս հասուցին 'ի հնումն յազգի մերում, ոչ է տեղւոյս խօսել, առաքեմ զցանկացողն յէջս անաչառ պատմչաց ազգիս, որք այսոցիկ ամենայնի աւանդապահք են։ Եւ զայս ոչ եթէ պարսաւադէտ մտօք ասեմ ես 'ի վերայ ազգին, քանզի և ես անդամ եմ նորա, այլ զճշմարտութիւն անխարդախ դաւանել ոչ ինչ երկնչիմ. և եթէ ես լուցից պատմիչք ազգիս բարձրագոչ աղաղակեն։ Ոչ կամիմ քմայարդար և ախորժալուր բանիւք գեղերեսել զթերութիւնս ազգիս, զի այն ոչ ուղղելոյ ինչ նշանակ է, այլ 'ի թերութիւնս զնա կանդաղելոյ։

Եւ զինչ պատճառք խռովասէր անմիաբանութեան. եթէ ոչ յաչաղկոտութի և նախանձ, ինքնահաւան կարծիք և նպերտ բարք, որովք 'ի ծուէնս ծուէնս պատառին ամենայն ընկերութիւնք, մինչդեռ իւրաքանչիւր ձեռն յանձին հարեալ ունչս զընկերաւ առնիցէ, և փոխանակ ձեռնկալու նմին լինելոյ առաթուր հարկանիցէ։ Եւ քանզի 'ի միաբանութեան է ամենայն իրաց հաստատութիւն, որով տկարքն զօրանան, արիասիրտքն խրախուսեն, պղերգք քաջանան, անկամք կամաւորին, և ձեռն 'ի ձեռն տուեալք լինին իբրև քաղաք ամուր անվանելի յերեսաց թշնամեաց և 'ի բախմանէ ամենի ոսոխաց, ապա 'ի պառակտելն քակտի ամրապինդ շինուած զինչ և է ընկերութեան, և դնի յեղծումն և յապականութիւն։

Յօրինակ անմիաբանութեան կայ ամբարտակն բաբելոնական, շինուած ամբարտաւանութեան մարդկան, որ 'ի խառնակել լեզուացն աստուածասաստ պատուհասիւ և անմիաբանել կարծեաց, անկաւ կործանեցաւ անկանգնելի։ Կամ ձեզ վատաբախտիկն Աբշակ Հայոց թագաւոր, որ երեսուն և վեց պատերազմունս մղեալ ընդդէմ Պարսից, յամենեսին ևս գտաւ յաղթական և ոչ պարտեալ. այլ իբրև անմիաբանութեան նենգամիտ գաղան սպրդեաց 'ի նախարարսն, որպէս ասէ պատմիչն, և սկսան սորսորել 'ի նմանէ, անդէն վատթարացան իրքն, և զօրացաւ կնամարդի Պարսիկն 'ի վերայ քաջաբազուկ Հայոցն։ Կամ ձեզ Վարդան արիասիրտն և քաջաբազուկ որ 'ի դաշտն Աւարայրի աւրեամբ իւրով բոլոր բառնայ զանմիաբանութենէ ազգին իւրոյ յերկինս և յերկրի։ Օ նոյն է ասել և զայլոց ոչ սակաւուց, որպէս զՄամբատայ Բագրատունւոյ, որում նախանձընդդէմ եղ ընդառաջ ամբարհաւաճ Պագիկ Արծրունեաց թագաւոր. զՊագկայ Երկրորդէ, զվերջին թագաւորէ Բագրատունեաց գահակալութեան, որում խոչընդոտն եղև անօրէնն Վեստ Վարդիս։ Կամ ձեզ և ազգ Յունաց որ 'ի Մարաթոն և 'ի Սաղամիս փոքու ջոկատաւ զբազմախումբ ճամբար Պարսից հալածական վարեաց, և զհպարտացեալն խոնարհեցոյց, բայց և ինքն օրէնսդիրն ազգայ ոչ յետ բազմաց խոնարհեցաւ ընդ լծով օտար ազգայ առ Աղեքսանդրիւ մեծաւ և առ Պաւղոսիւ Էմիլիոսիւ, վասն պառակտելոյ յինքեան։

Օ թէ ինձ դեգերել 'ի պատմութիւնս հնոյ ազգայ մինչդեռ առ կռան ունիմք զայլ օրինակս։ Պուք իսկ աչօք ձերովք

տեսիք և լուայք ականջօք, եթէ զինչ ինչ չարիս ոչ գործեցին յանցելում խռովայոյզ և մարտամբոխ ամի անմիաբանութիւն և երկպառակութիւն յիտալացւոց աշխարհիս, յորում այր իւրաքանչիւր զկամն անձին կամեցեալ կացուցանել, ամենեքին 'ի միասին տապաստ կործանեցան։ Ո՛հ, ոչ հանդուրժէ սիրտ իմ մանր կրկտել զաղէտսն որ 'ի նոցանէ ծնան, այլ լաւ համարիմ աքօղել ընդ սևաթոյր վարագուրաւ։

Դախերուք ապա, սիրելիք իմ, փախերուք յանմիաբանութենէ, քանզի բազում են նորա փնասք, և անդարմանելիք գլխովին. չիք ախտ ժանտ և փնասաբեր ընկերութեան մարդկան քան զանմիաբանութիւն և զերկպառակութիւն։ Եւ ամենեցուն Հայորերոյ այս լինիցին պարտք՝ միով ոգւով վառեալ վաստակել միամիտ և միահաւան յօգուտ ազգին և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ։ . . .

Հուսկ ուրեմն լերուք ազգասէրք և հայրենասէրք, իւրաքանչիւր ըստ իւրում կարի ջանալով նպաստամատոյց լինել ազգին խորհրդով, վաստակօք և ընչիւք և այլով ամենայնիւ որում կարօտ իցէ ազգն և ձեզ հնարաւոր, որով և 'ի տարեգիրս բարերարաց ազգիս դրոշմեսցին ոսկի տառիւք և ձեր անուանք, և մի նզովեսցին իբրև զազգատեաց և զազգահալած արանց անուանս։ Բայց որպէս ամենայն առաքինութիւն 'ի միջակին հաստատեալ է, զնոյն պարտ է իմանալ և զազգասիրութենէ և զհայրենասիրութենէ. զի յախուռն ազգասէր ոչ ինչ նուազ քան զազգատեացն չարիս կուտէ 'ի վերայ ազգին հապճեպ և անխորհուրդ ընթացիւք իւրովք, և խակ և տհաս մտածութեամբք։ Այս ինչ խտիր է ընդ ազգասէր յորձնեռանդն և ընդ ազգատեաց, զի առաջինն գէթ առժամանակ մի բոցափայլեալ վառի և խտտղէ զաչս տեսանելեաց, բայց և ընդ շինջանելն խանձէ խանձոտէ և զայլ 'ի հուր սաստկութեան իւրոյ, իսկ երկրորդն է արձան աղի, յոչինչ պիտանացու, աւելորդ բեռն աշխարհի։ Խորշեցէք յերկրորդէն և զգուշացարուք յառաջնոյն։ . . .

Մինիք բանիս, և եթէ որպէս արժան իցէ այնպէս կենցաղավարեսջիք 'ի նորոգ կեանս ձեր, վարուք և գործով լինելով այլոց օրինակ բարեաց, զոր պահանջէ 'ի ձէնջ իրաւամբք վարժարանն որ մնոյց զձեզ, այս վեցեքին ամք են՝ յայսոլիսի աստուածազգեցիկ սկզբունս, յայնժամ պայծառասցին և անուանք ձեր իբրև զարանց առաքինեաց, բարեաց թողլով յաւերժ յիշատակ, և պըսակեսջիք յանտիս յանմոխանձ և առատաբաշխ ձեռաց Բարձրելոյն։ Եւ այն լիցի փոխարէն լիով և մերոց այնչափ աշխատութեանց և քրտանց զոր հոսեցաք վասն ձեր, առ յորդորելոյ զձեզ խոտորել 'ի չարէն և գնալ զհետ արդարութեան, և առնել զօրէնս և ըզպատուիրանս Տեառն։

Բայց զինչ և առնիցէք գործս բարիս, մի ակն ունիցիք առնուլ ինչ վարձս 'ի մարդկանէ, այլ յԱստուծոյ Լեթ։ Ահա ձեզ օրինակ Հարք այսր պատկառելի ակմբիս, որոց զոգի 'ի բռին եդեալ ամենայն Ճգամբ, վաստակին 'ի պայծառութիւն եկեղեցւոյ սրբոյ, յօգուտ ազգին և յօգուտ հոգւոց իւրեանց։ Օ՜սոսա և վնմանիս նոցա օրինակ ձեզ առէք, որք ոչ փառս առ 'ի մարդկանէ ցանկան առնուլ, այլ ակնկալեալ մնան առատատուր ձեռաց հաստչին բոլորեցուն։ Արդարև դժուարին է Ճանապարհ առաքինութեան և լի 'ի նմա խոչք և խութք. սակայն 'ի ծայր այնր Ճանապարհի միայն համբարեալ կան պսակք անմահութեան. անդր յառեսջիք, և քրտնաթոր Ճակատք պսակեսցին անթառամ։

Ի Ռոփ. Վարժ. 29 օգոստ. 1850։

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՍՈՓ. ԲԱՂՈՒՆԻ